ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԾՁԲ-20-6/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 20 .02.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամն, ի դեմս ռեկտոր Ա. Մուրադյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 29.11.2019թ. կնքված № ԳՀԾՁԲ-20-6/1-1 գնման պայմանագրի, այսուհետ՝ «Պայմանագիր», 7.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը, այսուհետ՝ «Համաձայնագիր», հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով երիտասարդական հանրակացարանի (հանրակացարանային բնակտարածքի վարձակալության) ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված N 1-ի և Հավելված N 2-ի:

1.2. Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, Համաձայանագրով նախատեսված ծավալներով և ժամկետներում Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրով նախատեսված երիտասարդական հանրակացարանի (հանրակացարանային բնակտարածքի վարձակալության) ծառայություններ՝ համաձայն Համաձայնագրի Հավելված N1-ով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ ծառայությունները և վճարել դրա համար՝ Համաձայնագրի Հավելված N2-ով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ժամանակահատվածում:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 16,200,000 (տասնվեց միլիոն երու հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

3. Այլ պայմաններ

3.1 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Համաձայնագիրը կազմված է 4 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ Կ և ՌԿ վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Երևան, Կորյունի 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Տերյան» մ/ճ
Հ/Հ 900011113033	Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01503448
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետի ՊԺԿ	ռեկտոր
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 1
№ ԳՀԾՁԲ-20-6/1-1 գնման պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	CPV Կոդը	Ծառայության անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ծառայությունների մատուցումը՝ ըստ 2020թ. եռամսյակների, այդ թվում՝												Ընդհանուր առավելագույն գումարը (ՀՀ դրամ)
						1-ին եռամսյակ		2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ				
						Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր մինչև 20.12.2020թ		
1	55211100/501	Երիտասարդական հանրակացարանի ծառայություններ, այդ թվում՝	դրամ	1	15,000													
		Հանրակացարանային բնակտարածքի վարձակալություն	Մարդ/ամիս	1080		3,600,000		3,600,000			4,050,000			4,950,000				16,200,000
						160	80	80	80	80	80	80	110	110	110	110		
Ընդամենը						240		240			270			330				

Ծառայության մատուցումն՝ ըստ պատվիրատուի կողմից ներկայացված հայտերի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետի Պ.Ժ.Պ.

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտոր

Ս. ՍՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված N 2
№ ԳՀԾՁԲ-20-6/1-1 գնման պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	CPV կոդը	CPV անվանումը	Չ/Մ	Քանակը	Միավորի գինը	Գումարը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2020թ. պետական բյուջեից, ըստ ամիսների, աճողական, ընդ որում՝										
							Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր բայց ոչ ուշ քան 25.12.2020թ
1	55211100/501	Երիտասարդական հանրակացարանի ծառայություններ	դրամ	1	16,200,000	16,200,000	2,400,000	3,600,000	4,800,000	6,000,000	7,200,000	8,400,000	9,600,000	11,250,000	12,900,000	14,550,000	16,200,000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետի ՊԺԿ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշտական համալսարան» հիմնադրամ

Ա. ԱՎԱԳՅԱՆ